և առ Զաւուշ Պաշին, և իջեալ անտի 'ի դաւիթն տեսին պատրաստեալ նժոյգս ոսկիսանձս և զարդարեալ ծանրագին ոսկեթել ծածկութիւն, յորս աշտանակեցին Պատրիարքն, և այնոքիկ որք ունէին զվերարկու պատուոյ, և ոմանք յերեւելի Վարդապետաց և յաշխարհականաց, եւ գնացին շքեղ փառօք 'ի Պատրիարքարան, ուր ընկալան զնոսա դասք եկեղեցականաց մեծաւ հանդիսիւ զարդարեալ զգեստուք ըստ իւրաքանչիւր աստիճանի, ուր խըռնեալ էին անթիւ բազմութիւն արանց և կանանց, եւ Պատրիարքն մտեալ յեկեղեցին Օրհնեաց զժողովուրդն և արձակեաց։ Եւ 'ի վաղիւն որ էր շաբաթ, բերեալ հանդիսիւ նստուցին զնա յԱթոռ Պատրիարքութեան, և նախորդն չոքաւ 'ի վանքն Իւսկիւտարու իւրովքն հանդերձ, և Ամիրայք պատուէր եառն Փոխանորդին Երուսաղէմի չխնայել ինչ 'ի նմանէ, և ամենեքեան գոհացեալ փառս եառն Աստուծոյ զի առանց խռովութեան կատարեցաւ այս փոփոխութիւն Պատրիարքի։

Իսկ Դատաւորն Երուսաղէմի տակաւին կացեալ 'ի յամառութեան իւրում ստիպէր զՀայս առնուլ Իլամ վասն Ծննդեան և Աստուածածնի, և առաքել առ Տէրութիւնն. այլ Հայք ոչ առին յանձն խորհրդով Նուրեայ, եւ սպասէին առնուլ զպատասխանիս գրեանց։ Հասին 'ի Կոստանդինուպոլիս գրեանք Թէոդորոս Պատրիարքի, Նուրի Էֆէնտեայ, Դիոնէսիոս և Սարգիս վարդապետաց, զորս գրեցին 'ի Դամասկոսէ։ Դուռն բարձրք ծանեաւ զանցս Երուսաղէմի և Դամասկոսի 'ի գրոց Նուրեայ, և խնդրեցին ըզգրեանս Հայոց, եւ Պօղոս վարդապետ մատոյց զնոսա. 'ի նոցանէ եւս առաւել պարզ և բացայայտ երեւեցաւ խընդիրն, և եհաս մինչեւ յունկն Արքայի եւ մերկապարանոց յայտնեցաւ դաւաճանութիւն Խօճաքեանին, եւ բարկացեալ Արքայի հրամայեաց գլխատել զնա, այլ հազիւ զերծաւ նա 'ի միջնորդելոյ ուրումն, եւ դատապարտեցաւ յաքսոր յԱնարայ։ Գրեցաւ հրովարտակ եւ այլ կարեւոր գրեանք 'ի Դրանէ, եւ առաքեցաւ յատուկ սուրհանդակաւ (յ30 Սեպտեմբերի) աքսորել զԴատաւորն Երուսաղէմի. գրեցաւ նաեւ առ Կուսակալն Դամասկոսի և առաքեցաւ այլ սուրհանդակաւ գործադրել զհրովարտակն